Խորհրդի որոշմամբ կասեցումը կարող է հանվել, եթե պատվիրատուի ներկայացրած հիմնավորումների համաձայն, հանրային կամ պաշտպանության և ազգային անվտանգության շահերից ելնելով, անհրաժեշտ է շարունակել գնման գործընթացը: Սույն կետով նախատեսված որոշումը խորհուրդը հրապարակում է տեղեկագրում՝ այն կայացնելու օրվանից հաշված մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

**ՄԱՍ II**  
**Հ Ր Ա Հ Ա Ն Գ**  
**Գ Ն Ա Ն Շ Մ Ա Ն Հ Ա Ր Ց Մ Ա Ն Հ Ա Յ Տ Ը Պ Ա Տ Ր Ա Ս Տ Ե Լ ՈՒ**

**1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1.1 Սույն հրահանգը նպատակ ունի օժանդակել մասնակիցներին հայտը պատրաստելիս:

1.2 Նպատակահարմարության դեպքում մասնակիցը պահանջվող տեղեկությունները կարող է ներկայացնել սույն հրահանգով առաջարկվող ձևերից տարբերվող՝ այլ ձևերով՝ պահպանելով պահանջվող վավերապայմանները:

1.3 Հայտերը, հայերենից բացի, կարող են ներկայացվել նաև անգլերեն կամ ռուսերեն:

**2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՅՏԸ**

Ընթացակարգին մասնակցելու համար մասնակիցը սույն հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով սահմանված կարգով ներկայացնում է հայտ: Հայտին կցվում են սույն հրավերով նախատեսված համապատասխան փաստաթղթերը (տեղեկությունները):

Մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված՝

2.1 ընթացակարգին մասնակցելու դիմում՝ համաձայն Հավելված N°1-ի.

2.2 հայտարարություն սույն հրավերի 1-ին մասի՝ 2.2 կետով նախատեսված մասնակցության իրավունքի պահանջներին բավարարելու և 4.3 կետի 8-րդ և 9-րդ ենթակետերով նախատեսված պահանջների բացակայության մասին՝ համաձայն Հավելված N°2-ի, ինչպես նաև նույն կետի 10-րդ ենթակետով նախատեսված անձանց մասին տեղեկատվություն՝ համաձայն Հավելված N°2.1-ի.

2.3 հայտի ապահովում: Միակողմանի հաստատված հայտարարությունը՝ տուժանքը, ներկայացվում է Հավելված N°8-ով սահմանված ձևին համապատասխան:

Հայտի ապահովումը կանխիկ փողի ձևով ներկայացվելու դեպքում, հայտով ներկայացվում է կանխիկ փողի վճարումը հավաստող փաստաթղթի բնօրինակը.

2.4 հայտարարություն՝ սույն հրավերի 1-ին մասի 2.5-րդ կետով նախատեսված որակավորման չափանիշներին (մասնագիտական փորձառություն, պայմանագրի կատարման համար անհրաժեշտ՝ աշխատանքային ռեսուրսներ, տեխնիկական և ֆինանսական միջոցներ) իր համապատասխանության մասին համաձայն Հավելված N°3-ի.

2.5 գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե պայմանագիրն իրականացվելու է գործակալության միջոցով.

2.6 համատեղ գործունեության պայմանագիրը, եթե մասնակիցները գնման ընթացակարգին մասնակցում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով).<sup>2</sup>

2.7 գնային առաջարկ՝ համաձայն Հավելված N°4-ի: Գնային առաջարկը ներկայացվում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում:

**3. ՀԱՅՏԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԿԱՐԳԸ**

3.1 Մասնակիցը հայտը ներկայացնում է սույն հրավերով սահմանված կարգով:

Մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը ստանձնում է այն ներկայացնողը: Ծրարում ներառված փաստաթղթերը, կազմվում են բնօրինակից (բացառությամբ 3-րդ կողմի կողմից տրամադրված կամ հաստատված փաստաթղթերի, որոնց դեպքում ներկայացվում է դրանց՝ բնօրինակից պատճենահանված տարբերակը) և երկու օրինակ պատճեններից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «պատճեն» բառերը: Հայտում ներառվող բնօրինակ փաստաթղթերի փոխարեն կարող են ներկայացվել դրանց նոտարական կարգով վավերացված օրինակները:

Ծրարը և սույն հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

3.2 Սույն հրահանգի 3.1-ին կետում նշված ծրարի վրա հայտը կազմելու լեզվով նշվում են՝

1) պատվիրատուի անվանումը և հայտի ներկայացման վայրը (հասցեն).

2) գնանշման հարցման ծածկագիրը.

<sup>2</sup> Համապետող գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցելու դեպքում հայտում ներառվող՝ մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը պետք է հաստատված լինեն կոնսորցիումի բոլոր անդամների կողմից:



3) «չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը.

4) մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը:

3.3 Սույն հրահանգի 3.1 և 3.2 կետերի պահանջներին չհամապատասխանող հայտերը հանձնաժողովը հայտերի բացման նիստում մերժում է և նույնությամբ վերադարձնում ներկայացնողին:

**ԴԻՄՈՒՄ**  
**գնանշման հարցման մասնակցելու**

\_\_\_\_\_մասնակցի անվանումը\_\_\_\_\_ -ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցել  
«Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից «ՇՄՄՏԿ-  
ԳՀԾՁԲ-17/10» ծածկագրով հայտարարված գնանշման հարցման \_\_\_\_\_չափաբաժնի (չափաբաժինների) համարը  
չափաբաժնին (չափաբաժիններին) և հրավերի պահանջներին համապատասխան  
ներկայացնում է հայտ:

\_\_\_\_\_մասնակցի անվանումը\_\_\_\_\_ -ն հայտնում և հավաստում է, որ հանդիսանում է  
\_\_\_\_\_երկրի անվանումը\_\_\_\_\_ **ռեզիդենտ:**

\_\_\_\_\_մասնակցի անվանումը\_\_\_\_\_ -ի հարկ վճարողի հաշվառման համարն է՝  
\_\_\_\_\_հարկի վճարողի հաշվառման համարը \_\_\_\_\_:

\_\_\_\_\_մասնակցի անվանումը\_\_\_\_\_ -ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝  
\_\_\_\_\_էլեկտրոնային փոստի հասցեն \_\_\_\_\_:

\_\_\_\_\_  
Մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

\_\_\_\_\_  
ստորագրությունը

Կ. Տ.

## Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

### մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին

Սույնով \_\_\_\_\_ մասնակցի անվանումը \_\_\_\_\_-ն հայտարարում և հավաստում է, որ  
բավարարում է «ՇՄՄՏԿ-ԳՀԾՁԲ-17/10» ծածկագրով գնանշման հարցման հրավերով  
սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Միաժամանակ \_\_\_\_\_ մասնակցի անվանումը \_\_\_\_\_-ն

1) հայտնում և հավաստում է, որ «ՇՄՄՏԿ-ԳՀԾՁԲ-17/10» ծածկագրով գնանշման  
հարցմանը մասնակցելու շրջանակում՝

ա. թույլ չի տվել և (կամ) թույլ չի տալու գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային  
համաձայնություն,

բ. բացակայում է գնանշման հարցման հրավերով սահմանված՝ \_\_\_\_\_ մասնակցի անվանումը \_\_\_\_\_-ին  
փոխկապակցված անձանց և (կամ) \_\_\_\_\_ մասնակցի անվանումը \_\_\_\_\_-ի կողմից հիմնադրված  
կամ ավելի քան հիսուն տոկոս \_\_\_\_\_ մասնակցի անվանումը \_\_\_\_\_-ին պատկանող բաժնեմաս  
(փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության դեպք,

2) կից ներկայացնում է հայտը ներկայացնելու օրվա դրությամբ այն ֆիզիկական անձի  
(անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական  
կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավել քան տասն տոկոսը,  
ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները, ով  
իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ  
ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության  
արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին (իրական շահառուներ)<sup>3</sup>:

\_\_\_\_\_  
Մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

\_\_\_\_\_  
ստորագրությունը

Կ. Տ.

<sup>3</sup> Սույն ենթակետում նշված անձանց բացակայության դեպքում ներկայացվում է մասնակցի գործադիր մարմնի ղեկավարի և անդամների  
տվյալները:

**ՏՎՅԱԼՆԵՐ**  
**մասնակցի իրական շահառուների մասին**

| h/h | Անունը Ազգանունը<br>Հայրանունը | ՀՀ քաղաքացիների համար՝<br>նույնականացման քարտի կամ անձնագրի<br>կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված<br>անձը հաստատող փաստաթղթի տեսակը և<br>համարը | Օտարերկրյա քաղաքացիների<br>համար համապատասխան երկրի<br>օրենսդրությամբ նախատեսված<br>անձը հաստատող փաստաթղթի<br>տեսակը և համարը |
|-----|--------------------------------|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
|     |                                |                                                                                                                                               |                                                                                                                                |
|     |                                |                                                                                                                                               |                                                                                                                                |
|     |                                |                                                                                                                                               |                                                                                                                                |

\_\_\_\_\_մասնակցի անվանումը\_\_\_\_\_ -ն հավաստում է, որ իրական շահառուների  
մասին ներկայացված տեղեկատվությունը իրական է և չի պարունակում ոչ հավաստի  
տեղեկություններ:

\_\_\_\_\_  
Մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

\_\_\_\_\_  
ստորագրությունը

Կ. Տ.

**Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**  
**որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին**

Սույնով \_\_\_\_\_մասնակցի անվանումը\_\_\_\_\_ -ն հայտարարում և հավաստում է,  
որ բավարարում է «ՇՄՄՏԿ-ԳՀԾՁԲ-17/10» ծածկագրով գնանշման հարցման հրավերով  
սահմանված որակավորման չափանիշների պահանջներին:

---

Մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

---

ստորագրությունը

Կ. Տ.

### Գ Ն Ա Յ Ի Ն Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ

Ուսումնասիրելով «ՀՄՄՏԿ-ԳՀԾՁԲ-17/10» ծածկագրով գնանշման հարցման հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը՝ \_\_\_\_\_մասնակցի անվանումը \_\_\_\_\_-ն առաջարկում է պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

ՀՀ դրամ

| Չափա-<br>բաժինների<br>համարները | Ծառայության անվանումը                    | Արժեքը (ինքնարժեքի և<br>կանխատեսվող շահույթի<br>հանրագումարը)<br>/տառերով և թվերով/ | ԱԱՀ*<br>/տառերով<br>և թվերով/ | Ընդհանուր գինը<br>/տառերով և<br>թվերով/ |
|---------------------------------|------------------------------------------|-------------------------------------------------------------------------------------|-------------------------------|-----------------------------------------|
| 1                               | 2                                        | 3                                                                                   | 4                             | 5=3+4                                   |
| 1                               | <<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>> |                                                                                     |                               |                                         |
| 2                               | <<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N2>> |                                                                                     |                               |                                         |
| 3                               | <<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N3>> |                                                                                     |                               |                                         |
| 4                               | <<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N4>> |                                                                                     |                               |                                         |

\*Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:

\_\_\_\_\_  
Մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

\_\_\_\_\_  
ստորագրությունը

Կ. Տ.

**ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**  
**№ ՇՄՄՏԿ-ԳՀԾՁԲ-17/10**

ք. Երևան

«\_\_\_» «\_\_\_\_\_» 2017 թ.

ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրենի Ժ/պ Ս. Պապյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ «Պատվիրատու»), մի կողմից, և «\_\_\_\_\_» \_\_\_\_\_-ն, ի դեմս \_\_\_\_\_ի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ «Կատարող») մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1. Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող Հավելված №1-ով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2. Ծառայությունը մատուցվում է պայմանագրի Հավելված №1-ով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2. Եթե մատուցվել է պայմանագրի Հավելված №1-ում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն:

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3. Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի Հավելված №1-ով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1. Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2. Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3. Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1. Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4. Կատարողը պարտավոր է՝**

2.4.1. Պայմանագրի Հավելված №1-ով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2. Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3. Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված №3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված №3):

3.2. Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3. Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված տասը աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4. Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է \_\_\_\_\_ (\_\_\_\_\_ տառերով) ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ-ն<sup>4</sup>: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները: Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2. Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (Հավելված №2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

### 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2. Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.3. Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4. Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.5. Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.6. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

<sup>4</sup> Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:



## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2. Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4. Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5. Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6. Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագրի կնքելու միջոցով՝

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում<sup>5</sup>:

7.7. Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները<sup>6</sup>:

7.8. Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման

<sup>5</sup> Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագրի կնքելու միջոցով:

<sup>6</sup> Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համադրող գործունեության (կոնսորցիումի) պայմանագրի կնքելու միջոցով:

ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9. Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10. Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11. Կատարողի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13. Սույն պայմանագիրը կազմված է էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի №N 1; 2; 3 և 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14. Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ

ք.Երևան, Չարենցի 46

«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ

ՀՀ 16048321347800

ՀՎՀՀ 02659596

«Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժ/պ

**Ս. Պապյան**

(ստորագրություն)

**Կ.Տ.**

### ԿԱՏԱՐՈՂ

-----

-----

-----

ՀՀ -----

ՀՎՀՀ -----

-----

(ստորագրություն)

**Կ.Տ.**

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված №1  
«\_\_\_» «\_\_\_\_\_» 2017 թ. կնքված  
«ՇՄՄՏԿ-ԳՀԾՁԲ-17/10» ծածկագրով պայմանագրի

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**  
«Շրջակա միջավայրի մոնիթորինգի և  
տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժ/պ  
**Ս. Պապյան**

(ստորագրություն)  
**Կ.Տ.**

**ԿԱՏԱՐՈՂ**

(ստորագրություն)  
**Կ.Տ.**

### ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ծառայության                          |                                                                           |                                                                                                                                                                                                                                                                                                             |                |                |                  |                                                                        |              |
|--------------------------------------|---------------------------------------------------------------------------|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----------------|----------------|------------------|------------------------------------------------------------------------|--------------|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը                                                                                                                                                                                                                                                                                       | չափման միավորը | ընդհանուր գինը | ընդհանուր քանակը | մատուցման                                                              |              |
|                                      |                                                                           |                                                                                                                                                                                                                                                                                                             |                |                |                  | հասցեն                                                                 | Ժամկետը      |
| 1.                                   | 50111130                                                                  | <b>Ֆորդ Ռենջեր (Ford Ranger pickup 3.0 TDCI) ավտոմեքենայի (2 ավտոմեքենա)</b><br>- SU-1 և SU-2 ներառվող ծառայությունների մատուցում<br>- SU-2 ներառվող ծառայությունների ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի փոխարինում<br>Ծառայությունների մատուցումը ըստ կցված գնացուցակի | դրամ           |                | 1                | Ծառայությունը մատուցողի գործունեության վայրում, Երևան քաղաքի տարածքում | 15.12.2017թ. |
| 2.                                   |                                                                           | <b>ՎԱՁ 21214 Նիվա մակնիշի ավտոմեքենաների (3 ավտոմեքենա)</b><br>- SU-1 և SU-2 ներառվող ծառայությունների մատուցում<br>- SU-2 ներառվող ծառայությունների ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի փոխարինում<br>Ծառայությունների մատուցումը ըստ կցված գնացուցակի                  |                |                | 1                |                                                                        |              |
| 3.                                   |                                                                           | <b>ՈւԱՁ Պատրիոտ(UAZ 3163) մակնիշի ավտոմեքենաների (1 ավտոմեքենա)</b><br>- SU-1 և SU-2 ներառվող ծառայությունների մատուցում<br>- SU-2 ներառվող ծառայությունների ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի փոխարինում<br>Ծառայությունների մատուցումը ըստ կցված գնացուցակի          |                |                | 1                |                                                                        |              |

\*Օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի նոր և չօգտագործված լինելու պայմանը պարտադիր է:

**ԳՆԱՑՈՒՑԱԿ**

**Ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման՝ SU-1 (տեխնիկական զննում/դիագնոստիկա/), SU-2 (վերանորոգման) ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի**

| NN | SU-1, SU-2 ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները | Ավտոմեքենաների մակնիշները (տեսակները) ըստ չափաբաժինների |                                                |                                                |
|----|-----------------------------------------------------------------------------------------------------------------------|---------------------------------------------------------|------------------------------------------------|------------------------------------------------|
|    |                                                                                                                       | 1-ին չափաբաժին                                          | 2-րդ չափաբաժին                                 | 3-րդ չափաբաժին                                 |
|    |                                                                                                                       | Ֆորդ Ռենջեր ավտոմեքենա (2 ավտոմեքենա)                   | ՎԱՀ 21214 մակնիշի ավտոմեքենաներ (3 ավտոմեքենա) | ՈւԱՀ Պատրիոտ մակնիշի ավտոմեքենա (1 ավտոմեքենա) |
| 1  | 2                                                                                                                     | 3                                                       | 4                                              | 5                                              |
|    | <b>SU-1 ներառվող ծառայությունների անվանում</b>                                                                        |                                                         |                                                |                                                |
| 1  | Բռնկման համակարգի ստուգում                                                                                            |                                                         |                                                |                                                |
| 2  | Սառեցման համակարգի ստուգում                                                                                           |                                                         |                                                |                                                |
| 3  | Յուղման համակարգի ստուգում                                                                                            |                                                         |                                                |                                                |
| 4  | Արտացման համակարգի ստուգում                                                                                           |                                                         |                                                |                                                |
| 5  | Կցորդման համակարգի ստուգում                                                                                           |                                                         |                                                |                                                |
| 6  | ՓՏ-ի աշխատանքի ստուգում                                                                                               |                                                         |                                                |                                                |
| 7  | ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում                                                                                              |                                                         |                                                |                                                |
| 8  | Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում                                                                               |                                                         |                                                |                                                |
| 9  | Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում                                                                                       |                                                         |                                                |                                                |
| 10 | Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում                                                                          |                                                         |                                                |                                                |
| 11 | Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում                                                                            |                                                         |                                                |                                                |
| 12 | Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում                                                                              |                                                         |                                                |                                                |
| 13 | ABS համակարգի ստուգում                                                                                                |                                                         |                                                |                                                |
| 14 | Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում                                                                               |                                                         |                                                |                                                |
| 15 | Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում                                                                               |                                                         |                                                |                                                |
| 16 | Թափքի վիճակի ստուգում                                                                                                 |                                                         |                                                |                                                |
| 17 | Տարբեր ագրեգատների յուղերի որակի և մակարդակների ստուգում                                                              |                                                         |                                                |                                                |
|    | <b>SU-2 ներառվող ծառայությունների անվանում</b>                                                                        |                                                         |                                                |                                                |
|    | <b>1.Շարժիչ</b>                                                                                                       |                                                         |                                                |                                                |
| 18 | Շարժիչի հանում և տեղադրում                                                                                            |                                                         |                                                |                                                |
| 19 | Նույնը DOHC (2 բաշխիչ լիսեռ) դեպքում                                                                                  |                                                         |                                                |                                                |
| 20 | Նույնը կոնդիցիոների դեպքում                                                                                           |                                                         |                                                |                                                |
| 21 | Նույնը ԱՓՏ-ի դեպքում                                                                                                  |                                                         |                                                |                                                |
| 22 | Շարժիչի վերանորոգում                                                                                                  |                                                         |                                                |                                                |
| 23 | Նույնը DOHC դեպքում                                                                                                   |                                                         |                                                |                                                |
| 24 | Նույնը V6-ի դեպքում                                                                                                   |                                                         |                                                |                                                |
| 25 | Շարժիչի բարձրիկի հանում և տեղադրում                                                                                   |                                                         |                                                |                                                |
| 26 | Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում                                                                                  |                                                         |                                                |                                                |
| 27 | Նույնը աջի համար (V6)                                                                                                 |                                                         |                                                |                                                |
| 28 | Նույնը ձախի համար (V6)                                                                                                |                                                         |                                                |                                                |
| 29 | Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում                                                                               |                                                         |                                                |                                                |
| 30 | Նույնը աջի համար (V6)                                                                                                 |                                                         |                                                |                                                |
| 31 | Նույնը ձախի համար (V6)                                                                                                |                                                         |                                                |                                                |
| 32 | Շարժիչի գլխիկի միջադիրների փոխարինում                                                                                 |                                                         |                                                |                                                |
| 33 | Շարժիչի գլխիկի վերանորոգում                                                                                           |                                                         |                                                |                                                |

|    |                                                |  |  |  |
|----|------------------------------------------------|--|--|--|
| 34 | Փականի խցուկի փոխարինում                       |  |  |  |
| 35 | Նույնը V6-ի դեպքում                            |  |  |  |
| 36 | Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում               |  |  |  |
| 37 | Նույնը V6-ի ձախի դեպքում                       |  |  |  |
| 38 | Նույնը V6-ի աջի դեպքում                        |  |  |  |
| 39 | Նույնը DOHC դեպքում                            |  |  |  |
| 40 | Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում                |  |  |  |
| 41 | Հրիչների փոխարինում SOHC                       |  |  |  |
| 42 | Նույնը DOHC դեպքում                            |  |  |  |
| 43 | Ատամնավոր փոկի փոխարինում                      |  |  |  |
| 44 | Նույնը DOHC դեպքում                            |  |  |  |
| 45 | Նույնը V6-ի դեպքում                            |  |  |  |
| 46 | Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում          |  |  |  |
| 47 | Նույնը կոնդիցիոների դեպքում                    |  |  |  |
| 48 | Նույնը DOHC դեպքում                            |  |  |  |
| 49 | Նույնը կոնդիցիոների դեպքում                    |  |  |  |
| 50 | Նույնը V6-ի դեպքում                            |  |  |  |
| 51 | Նույնը կոնդիցիոների դեպքում                    |  |  |  |
| 52 | Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում          |  |  |  |
| 53 | Նույնը ԱՓՏ-ի դեպքում                           |  |  |  |
| 54 | Մխոցային օդակների փոխարինում                   |  |  |  |
| 55 | Նույնը DOHC դեպքում                            |  |  |  |
| 56 | Նույնը V6-ի դեպքում                            |  |  |  |
| 57 | Թափանիվի հանում և տեղադրում                    |  |  |  |
|    | <b>2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ</b> |  |  |  |
| 58 | Յուղի և յուղի գտիչի փոխարինում                 |  |  |  |
| 59 | Յուղի պոմպի փոխարինում                         |  |  |  |
| 60 | Նույնը DOHC դեպքում                            |  |  |  |
| 61 | Նույնը V6-ի դեպքում                            |  |  |  |
| 62 | Ղեկավարման բլոկի վերանորոգում                  |  |  |  |
| 63 | Բռնկման կարգավորում                            |  |  |  |
| 64 | CO կարգավորում                                 |  |  |  |
| 65 | Խարնարակի հանում և տեղադրում                   |  |  |  |
| 66 | Խարնարակի վերանորոգում                         |  |  |  |
| 67 | Օդի գտիչի փոխարինում                           |  |  |  |
| 68 | Ինժեկտորի ֆորսունկաների փոխարինում             |  |  |  |
| 69 | Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում                |  |  |  |
| 70 | Բենզամղիչի փոխարինում                          |  |  |  |
| 71 | Վառելիքի գտիչի փոխարինում                      |  |  |  |
| 72 | Վառելիքի բաքի հանում և տեղադրում               |  |  |  |
| 73 | Տրամյորի հանում և տեղադրում                    |  |  |  |
| 74 | Տրամյորի վերանորոգում                          |  |  |  |
|    | <b>3. Սառեցման և արտաժման համակարգ</b>         |  |  |  |
| 75 | Հովհարի փոկի հանում և տեղադրում                |  |  |  |
| 76 | Հովհարի հանում և տեղադրում                     |  |  |  |
| 77 | Ռադիատորի հանում և տեղադրում                   |  |  |  |

|     |                                                       |  |  |  |
|-----|-------------------------------------------------------|--|--|--|
| 78  | Նույնը կոնդիցիոնների դեպքում                          |  |  |  |
| 79  | Նույնը ԱՓՏ-ի դեպքում                                  |  |  |  |
| 80  | Ռադիատորի վերանորոգում                                |  |  |  |
| 81  | Թերմոստատի փոխարինում                                 |  |  |  |
| 82  | Ջրի պոմպի փոխարինում                                  |  |  |  |
| 83  | Նույնը DOHC և V-6 դեպքում                             |  |  |  |
| 84  | Նույնը կոնդիցիոնների դեպքում                          |  |  |  |
| 85  | Ջրի պոմպի վերանորոգում                                |  |  |  |
| 86  | Նույնը DOHC դեպքում                                   |  |  |  |
| 87  | Նույնը կոնդիցիոնների դեպքում                          |  |  |  |
| 88  | Ընդարձակող բաքի փոխարինում                            |  |  |  |
| 89  | Խլարարի հանում և տեղադրում                            |  |  |  |
| 90  | Նույնը DOHC դեպքում                                   |  |  |  |
| 91  | Ռադիատորի փողրակի հանում և տեղադրում                  |  |  |  |
|     | <b>4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ</b>                          |  |  |  |
| 92  | Բանվ. կամ գլխ. գլանի հանում և տեղադրում               |  |  |  |
| 93  | Բանվ. կամ գլխ. գլանի վերանորոգում                     |  |  |  |
| 94  | Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում        |  |  |  |
| 95  | Կցորդման ոտնակի հանում և տեղադրում                    |  |  |  |
| 96  | Կցորդման ճոպանի հանում և տեղադրում                    |  |  |  |
| 97  | ՓՏ-ի հանում և տեղադրում                               |  |  |  |
| 98  | ՓՏ-ի վերանորոգում                                     |  |  |  |
| 99  | ՓՏ-ի առանցքակալի փոխարինում                           |  |  |  |
| 100 | ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում                       |  |  |  |
| 101 | Վազքաշափի շարժաբերի փոխարինում                        |  |  |  |
| 102 | ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում                   |  |  |  |
| 103 | ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում                      |  |  |  |
| 104 | Նույնը V6-ի համար                                     |  |  |  |
| 105 | ԱՓՏ-ի հանում և տեղադրում                              |  |  |  |
| 106 | Նույնը V6-ի համար                                     |  |  |  |
| 107 | ԱՓՏ-ի վերանորոգում                                    |  |  |  |
| 108 | Նույնը V6-ի համար                                     |  |  |  |
| 109 | ԱՓՏ-ի յուղի զտիչի փոխարինում                          |  |  |  |
|     | <b>5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ</b>               |  |  |  |
| 110 | Բաշխիչ տուփի հանում և տեղադրում                       |  |  |  |
| 111 | Բաշխիչ տուփի հանում և տեղադրում վերանորոգումով        |  |  |  |
| 112 | Բաշխիչ տուփի խցուկի փոխարինում                        |  |  |  |
| 113 | Կարդանային լիսեռի հանում և տեղադրում                  |  |  |  |
| 114 | Կարդանային լիսեռի հանում և տեղադրում, վերանորոգումով  |  |  |  |
| 115 | Կարդանային լիսեռի խաչուկի հանում և տեղադրում          |  |  |  |
| 116 | Կարդանային լիսեռի միջանկյալ կախոցի հանում և տեղադրում |  |  |  |
|     | <b>6. Առջևի և հետևի կամրջակներ</b>                    |  |  |  |
| 117 | Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում           |  |  |  |
| 118 | Առջևի կամ հետևի կամրջակի լիկատար քանդում և հավաքում   |  |  |  |
| 119 | Առջևի կամ հետևի կամրջակի մասնակի քանդում և հավաքում   |  |  |  |
| 120 | Առջևի կամ հետևի կամրջակի կիսասոնու հանում և տեղադրում |  |  |  |

|     |                                               |  |  |  |
|-----|-----------------------------------------------|--|--|--|
| 121 | Կիսասոնու առանցքակալի փոխարինում              |  |  |  |
|     | <b>7. Կախոց</b>                               |  |  |  |
| 122 | Առջևի կախոցի լիակատար քանդում և հավաքում      |  |  |  |
| 123 | Տրավերսի հանում և տեղադրում                   |  |  |  |
| 124 | Ձախ կամ աջ հողակալի հանում և տեղադրում        |  |  |  |
| 125 | Անվակունդի առանցքակալի փոխարինում             |  |  |  |
| 126 | Նույնը հետին տանող ա/մ-երի համար              |  |  |  |
| 127 | Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում       |  |  |  |
| 128 | Նույնը հետին տանող ա/մ-երի համար              |  |  |  |
| 129 | Ձախ կամ աջ հողակալի խցուկների փոխարինում      |  |  |  |
| 130 | Ձախ կամ աջ հողակալի առանցքակալների փոխարինում |  |  |  |
| 131 | Ցնցամեղմիչի թասակի փոխարինում                 |  |  |  |
| 132 | Զսպանակի հանում և տեղադրում                   |  |  |  |
| 133 | Զսպակի հանում և տեղադրում                     |  |  |  |
| 134 | Զսպակի վռանների փոխարինում                    |  |  |  |
| 135 | Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում          |  |  |  |
| 136 | Ներքևի լծակի հանում և տեղադրում               |  |  |  |
| 137 | Ներքևի լծակի վռանների փոխարինում              |  |  |  |
| 138 | Առջևի աջ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում  |  |  |  |
